# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Իվաֆարմ ՍՊԸ-ն ՌԻԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/98 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Բարձր դոզավորման բրա խիթերապիայի սարք SagiNova | Բարձր դոզավորման բրա խիթերապիայի սարք SagiNova | SagiNova | Bebig GmbH | Բարձր դոզավորման բրախիթերապիայի սարքավորում (High Dose Rate Brachytherapy System) 1. Ընդհանուր բնութագիր 1.1. Սարքավորումը պետք է նախատեսված լինի քաղցկեղային հիվանդությունների բուժման համար բրախիթերապիայի մեթոդով: Սարքավորումը պետք է ունենա հնարավորություն աշխատելու կրկնակի աղբյուրների հետ ինչպիսիք են Co-60-ը և Ir-192-ը: 1.2 Չափաբաժինը պետք է ներառի առնվազն ստորև ցանկում ներկայացված կետերը՝ • Բարձր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | դոզավորման բրախիոթերապիայի սարքավորում 1 հատ: • Co-60 Աղբյուր 74 GBq ±10%, Co0.A86 տեսակի առնվազն 1 հատ: • Co-60 փոխադրման և աղբյուրի փոխանակման տարա առնվազն 1 հատ: • Ամբողջական բուժման պլանավորման համակարգ` համակարգիչ, առնվազն երկու 24" TFT (Thin Film Transistor-Բարակ թաղանթային տրանզիստոր) մոնիտորներով, պահուստային համակարգով և ցանցային բաժանարարով առնվազն 1 հատ: • Արտակարգ դեպքերի համար նախատեսված տարա Co-60-ի համար առնվազն 1 հատ: • Ռադիացիոն տարածքի մոնիտորինգի համակարգ HDR-ի համար առնվազն 1 հատ: • Հիվանդի հետ ձայնային կապ, 100-240 V առնվազն 1 հատ: • Տեսահսկողություն հեռակառավարվող ռոբոտացված տեսախցիկով, 100-240 V առնվազն 1 հատ: • Համակարգչային տակտիլ ստեղնաշար լատինատառ առնվազն 2 հատ: • Անխափան սնուցման սարքավորում, CE 230V (176–282V, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 50/60Hz) առնվազն 1 հատ: • Միացման մալուխների բաշխման տերմինալ առնվազն 5 մետր երկարությամբ առնվազն 1 հատ: • CT/MR - Փոփոխական երկարությամբ հեշտոցային/ռեկտալ ապլիկատորի հավաքածու առնվազն 2 հատ: • CT/MR - Fletcher տեսակի ապլիկատորների հավաքածու, գունավոր կոդավորված առնվազն 2 հատ: • CT/MR ներարգանդային խողովակներ առնվազն 1 հատ: • CT/MR ներարգանդային խողովակներ, բարակ, գունավոր կոդավորված առնվազն 1 հատ: • CT/MR պահող դիսկեր գինեկոլոգիական ապլիկատորի համար, d=5.0 մմ D=15 մմ (5 հատ) առնվազն 1 հատ: • CT/MR պահող դիսկեր գինեկոլոգիական ապլիկատորի համար, d=3.5 մմ D=15 մմ (5 հատ) առնվազն 1 հատ: • Սկավառակները բռնելու համար նախատեսված պինցետ առնվազն 1 հատ: • Փոխադրող խողովակ D=3 մմ, L=1000 մմ առնվազն 3 հատ: • Ունիվերսալ ապլիկատոր, ներառյալ վարդակից միացում, D=3 մմ, L=1400 մմ (ոչ ստերիլ) առնվազն 4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հատ: • Կափարիչով զամբյուղ մանր մասերի մաքրման և ստերիլիզացման համար առնվազն 1 հատ: • Ապլիկատորի սեղմիչ հիմքով առնվազն 1 հատ: • Սարքի տեղադրում 1 հատ: • CT/MR M.A.C. (Mick-Alektiar-Cohen) տեսակի ներհյուսվածքային գինեկոլոգիական ապլիկատոր հավաքածու առնվազն 1 հատ: • Փոխադրող խողովակների կախիչ պատին ամրացվող առնվազն 1 հատ: • Մատակարարում: 1.3 Բարձր դոզավորման բրախիոթերապիայի սարքավորում: 1.3.1 Պետք է լինի հեշտ կառավարելի տեղափոխման համար և պետք է ունենա էրգոնոմիկ դիզայն: Պետք է ունենա անիվներ: 1.3.2 Պետք է ունենա առնվազն 15 ալիք ներխոռոչային բարձր դոզայի արագությամբ բրախիթերապիայի համար՝ Co-60 ակտիվության աղբյուրով 74 ԳԲք ±10% առաքման ժամանակ: 1.3.3 Պետք է լինեն ճշգրիտ կրկնակի կրիչներ փոքրացված Co-60 աղբյուրի և կեղծ աղբյուրի համար՝ շարունակական թվային դիրքավորումով, ներառյալ նախքան |

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ивафарм ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/98 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | ճառագայթումը կեղծ նմուշով փորձարկման ժամանակ անվտանգության և կատետերի երկարության ստուգման համար: 1.3.4 Պետք է ունենա ներկառուցված մարտկոց կամ UPS հոսանքի խափանումներից ապահովելու համար: 1.3.5 Պետք է լինի կռունկ աղբյուրը ձեռքով հանելու համար, երկար բռնակով պինցետ և վթարային կոնտեյներ, որը պետք է լինի առնվազն մինչև 81GBq Co-60 պահեստավորման համար և բավականաչափ մեծ՝ տեղավորելու համար հնարավոր ամենամեծ ապլիկատորը: 1.3.6 Սարքավորումը պետք է ունենա բոլոր անվտանգության նշանները անգլերեն լեզվով: 1.4 Բուժման Առաջադեմ Պլանավորման Համակարգ: 1.4.1 Բուժման պլանավորման համակարգը պետք է իրականացնի բուժման պլանավորման, շահագործման, վերահսկման և մոնիտորինգի գործառույթները: Պետք է լինի մեկ հարթակ HDR պլանավորման կարիքների համար: Համակարգը պետք է նախատեսված լինի մարմնի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բոլոր տեղամասերի պլանավորման համար նույն ծրագրային միջավայրում։ Պետք է հնարավորություն տա տարբեր պատկերներից այդ թվում նաև ուլտրաձայնային վիդեո հեռարձակման պատկերից իրականացնել շագանակագեղձի բուժման պլանավորում իրական ժամանակում։ 1.4.2 Օգտագործողի համար պետք է ունենա հարմար և ինտուիտիվ դիզայն։ 1.4.3 Հաճախակի կրկնվող բուժման կարգավորումները պետք է հնարավոր լինի պահպանել որպես ձևանմուշ։ 1.4.4 Պետք է լինի արագ փնտրելու գործառույթ, որը հնարավորություն կտա ձևանմուշները հեշտ գտնելու։ 1.4.2 Պետք է ունենա գաղտնաբառով սահմանված մուտք բոլոր օգտատերերի համար, օգտատիրոջ գործունեության և աղբյուրի փոխանցումների լոգավորում։ 1.4.5 Եզակիորեն սահմանված ստանդարտ բուժման տվյալների բազա կոշտ ապլիկատորների հավաքածուների և գծային աղբյուրների համար` աղբյուրի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | տեղակայման ժամանակների ինքնաշխատ թարմացումներով: Ծրագրի խմբագրման նպատակով տվյալների բազա մուտքը պետք է վերահսկվի և սահմանափակվի գաղտնաբառով: 1.4.6 Հիվանդի եզակի նույնականացում և բուժման պլանի պատրաստում: 1.4.7 Կարգավիճակի տեղեկատվության ցուցադրում, ներառյալ հոսանքի ընդհատումների ժամանակ: 1.4.8 Բուժման առցանց տեսածայնագրում՝ բուժման ընթացքի վիզուալ և գրաֆիկական ցուցադրմամբ: 1.4.9 Բուժումից հետո ամբողջ բուժման արձանագրության տպագրման հնարավորություն: 1.4.10 Դոզայի օպտիմալացման հնարավորություն՝ հիմնված կաթետերի և աղբյուրի տեղկայման դիրքերի վրա: 1.4.11 Համակարգը պետք է թույլ տա DICOM-ին համապատասխանող պատկերի փոխանցում CT և C-arm ռենտգեն սարքից: 1.4.12 Հիվանդի և հաստատված բուժման պլանի տվյալների ավտոմատ առցանց փոխանցում բուժման կառավարման վահանակին: 1.4.13 CDROM կամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | DVDROM՝ ներառված համակարգչի հետ: 1.5 Ռադիացիոն տարածքի մոնիտորինգի համակարգ։ 1.5.1 Համակարգը պետք է ներառի ստորև նշված կետերը՝ • Ռադիոխրոմային թաղանթ՝ դոզաչափումների մեջ օգտագործելու համար: • Սենյակում պետք է տեղադրվի դոզիմետր՝ հնարավոր աղտոտվածության մակարդակը չափելու և վերահսկելու համար: • Ցածր աղմուկով մալուխներ ճշգրիտ չափումների համար: • Անհատական ճառագայթման մոնիտոր դոզայի արագության ձայնային ցուցանիշով: • Արտահոսքի փորձարկումների ժամանակ աղբյուրի վրա հնարավոր աղտոտվածությունը չափելու համար գնահատման հաշվիչ: 2. Տեղադրում 2.1 Մատակարարը պետք է տրամադրի նախատեղադրման խորհրդատվական ծառայություններ՝ օգնելու վերջնական օգտագործողին տարածքի և սարքավորումների պատրաստման հարցում: Սա ներառում է սենյակի պաշտպանիչ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պահանջների գնահատումը, համապատասխան էլեկտրական և մեխանիկական ենթակառուցվածքի ապահովումը և անվտանգության արձանագրությունների վերաբերյալ ուղեցույցների տրամադրումը: 2.2 Մատակարարը պետք է իրականացնի սարքավորման և կից մասերի տեղադրում: 2.3Կապալառուն պետք է տրամադրի համակարգի շահագործման համար անհրաժեշտ պահեստամասերի և սպառվող նյութերի ամբողջական ցանկը: 3. Տեղադրման թույլտվություն և համակարգում 3.1 Տեղադրման աշխատանքներ չպետք է սկսվեն առանց ՄԱԳԱՏԷ-ի համապատասխան թույլտվության: 3.2 Մատակարարը պետք է տրամադրի բոլոր անհրաժեշտ գործիքներն ու որակավորված անձնակազմը սարքավորման և կից նյութատեխնիկական միջոցների տեղադրման համար և հոգա ճանապարհորդության, բնակության և կեցության ծախսերը: 4. Երաշխիք 4.1 Սարքավորումը պետք է ունենա առնվազն երկու տարվա երաշխիք, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | որը ներառում է մասեր, աշխատուժ, ներառյալ ապարատային և ծրագրային ապահովման թարմացումները՝ սկսած շահագործման օրվանից: 4.2 Երաշխիքը պետք է ներառի պահեստամասերը և փոխարինումը։ 4.3 Մատակարարը պետք է իրականացնի հետերաշխիքային սպասարկում։ 5. Կիրառելի ստանդարտներ և փաստաթղթեր 5.1 Սարքավորումը պետք է համապատասխանի առնվազն ստորև ներկայացված միջազգային ստանդարտներին՝ • IEC 60601-1:2005+AMD1:2012 թ • IEC 60601-2-17:2013 • IEC 62083:2009 • ISO 2919:2012 6. Փաթեթավորում 6.1 Սարքավորումը պետք է փաթեթավորվի միջազգային ստանդարտներին համապատասխան նման սարքավորումների օդային կամ ավտոմոբիլային ճանապարհով առաքման համար: 6.2 Սարքավորումը պետք է լինի բոլորովին նոր, գործարանային փաթեթավորմամբ: 7. Մատակարարում 7.1 Հաղթած |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մասնակիցը պետք է իրականացնի սարքավորման մատակարարում առնվազն մինչև Զվարթնոց միջազգային օդանավակայան: |